



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՏԱԿՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Արդյունաբերական սեփականություն

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

No 2 (30)

ՄԱՍ
ЧАСТЬ 1

Агентство интеллектуальной собственности
Республики Армения

**ПРОМЫШЛЕННАЯ
СОБСТВЕННОСТЬ**

Официальный бюллетень

Սույն տեղեկագրում զետեղված տեղեկությունները համարվում են
հրապարակված 2004 թվականի հունիսի 6-ից

Երեւան 2004

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՍ 1

ԳՅՈՒՏԵՐ	5, 85
Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին	7, 87
ՕԳՏԱԿԱՐ ՍՈԴԵՆՆԵՐ	23, 101
Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին	25, 103
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՍՈՒՇՆԵՐ	27, 105
Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին	29, 107
ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ	35
Տեղեկություններ գրանցված ապրանքային եւ սպասարկման նշանների մասին	37
ՑՈՒՑԻՉՆԵՐ	69
ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	73
ԵՐԿՏԱՐ ԿՈԴԵՐԸ	109

ՄԱՍ 2

ՖԻՐՄԱՅԻՆ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐ	5
Տեղեկություններ 2001թ-ին գրանցված ֆիրմային անվանումների հայտերի մասին.	7

Հրատարակվում է Մտավոր սեփականության
գործակալության կողմից 1995թ.

Издаётся Агентством интеллектуальной
собственности с 1995г.

375010, Երեւան, Գլխավոր պող., Կառավարական տուն 3
Հեռ. 563-258 հայտերի ընդունման բաժին
Հեռ. 561-126 տեղեկատվական-տեխնոլոգիական
ապահովման բաժին

375010, Ереван, Главный проспект, Дом Правительства 3
Тел. 563-258 отдел приема заявок
Тел. 561-126 отдел информационно-технологического
обеспечения

Internet: <http://www.armpatent.org>

E-mail: armpat@cornet.am

СОДЕРЖАНИЕ

ЧАСТЬ 1	
ИЗОБРЕТЕНИЯ	5, 85
Сведения о выданных патентах	7, 87
ПОЛЕЗНЫЕ МОДЕЛИ	23, 101
Сведения о выданных патентах	25, 103
ПРОМЫШЛЕННЫЕ ОБРАЗЦЫ	27, 105
Сведения о выданных патентах	29, 107
ТОВАРНЫЕ ЗНАКИ	35
Сведения о зарегистрированных товарных знаках и знаках обслуживания	37
УКАЗАТЕЛИ	69
СООБЩЕНИЯ	73
ДВУБУКВЕННЫЕ КОДЫ	109

ЧАСТЬ 2	
ФИРМЕННЫЕ НАИМЕНОВАНИЯ	5
Сведения о зарегистрированных заявках фирменных наименований в 2001г.	7

CONTENTS

PART 1	
INVENTIONS	
Information on granted patents	
UTILITY MODELS	
Information on granted patents	
INDUSTRIAL DESIGNS	
Information on granted patents	
TRADE MARKS	
Information on registered trade marks and service marks	
INDEXES	
REPORTS	
TWO-LETTER CODES	

PART 2	
TRADE NAMES	
Information on registrated firm name's applications in 2001.	

ԳՅՈՒՏԵՐ

**Գյուտերին վերաբերող մատենագիտական տվյալների
նույնականացման միջազգային կոդերը
ըստ ՄՄՅԿ ST.9 ստանդարտի**

11	արտոնագրի համարը
13	փաստաթղթի տեսակի կոդը
	A1 Գյուտի հիմնական արտոնագիր
	A2 Գյուտի նախնական արտոնագիր
	B2 Նախնական արտոնագրով նախկինում պահպանված գյուտի հիմնական արտոնագիր
21	հայտի համարը
22	հայտի ներկայացման թվականը
23	լրացուցիչ նյութերի ստացման թվականով որոշված առաջնություն
24	արտոնագրով վերապահված իրավունքների գործողության սկիզբը
31	առաջնային հայտի համարը
32	առաջնային հայտի ներկայացման թվականը
33	երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջնային հայտը
42	հայտը համընդհանուր ծանոթացման դնելու թվականը
44	գյուտի նախնական արտոնագրի մասին տեղեկությունների հրապարակման թվականը
45	գյուտի հիմնական արտոնագրի մասին տեղեկությունների հրապարակման թվականը
51	միջազգային արտոնագրային դասակարգման (ՄԱԴ) ցուցիչը(ները)
54	գյուտի անվանումը
56	տեղեկատվության աղբյուրներ
57	գյուտի ռեֆերատը կամ հավակնության սահմանումը
62	ավելի վաղ ներկայացված հայտի համարը եւ ստացման թվականը, որից զատված է տվյալ հայտը
65	հայտին վերաբերող ավելի վաղ հրապարակված արտոնագրային փաստաթղթի համարը
71	հայտատուն, երկրի կոդը
72	գյուտի հեղինակը (ները), երկրի կոդը
73	արտոնագրատերը, հասցեն, երկրի կոդը
74	արտոնագրային հավատարմատար
85	միջազգային հայտի (PCT) ազգային փուլ անցման թվականը
86	միջազգային հայտի (PCT) համարը եւ ներկայացման թվականը
87	միջազգային հայտի (PCT) հրապարակման համարը եւ թվականը

Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին

(51) 7 A01C 7/12 (11) 1450 (13) A2
(21) P20030090 (22) 09.07.2003
(42) 13.10.2003

(71) Շավարշ Գրիգորյան (AM), Սիմոն Ռաֆայելյան (AM), Արայիկ Մեսրոպյան (AM)

(72) Շավարշ Գրիգորյան (AM), Սիմոն Ռաֆայելյան (AM), Արայիկ Մեսրոպյան (AM)

(73) Շավարշ Գրիգորյան, Երեւան, Ա. Տիգրանյան 5, բն. 73 (AM), Սիմոն Ռաֆայելյան, Երեւան, Նոր Նորքի 6-րդ միկրոշրջան 19, բն. 3 (AM), Արայիկ Մեսրոպյան, Եղվարդ, Երեւանյան 6, բն. 22 (AM)

(54) Ակոսակոճային սերմնահան ապարատ

(57) Գյուտը վերաբերում է գյուղատնտեսական մեքենաշինությանը, մասնավորապես՝ ակոսակոճային սերմնահան ապարատներին:

Ապարատն ունի սերմնատուփ, որի ներսում լիսեռի վրա տեղակայված է հորիզոնական առանցքի շուրջը պտտվելու եւ առանցքային ուղղությամբ տեղաշարժվելու հնարավորությամբ տեղակայված ակոսակոճ, վարդակ եւ փական: Ակոսակոճը պարփակված է առանցքային ուղղությամբ շարժուն անգործարար կոճով, որն ունի ակոսակոճի ակոսապատերին համապատասխան փորակներ:

Անգործարար կոճը առանցքային ուղղությամբ տեղաշարժելով, կարգավորում են ցանքի նորման, 3 նկ.:

(51) 7 A01D 34/00 (11) 1451 (13) A2
(21) P20030114 (22) 07.10.2003
(42) 11.11.2003

(71) «Հայկական գյուղատնտեսական ակադեմիա» պետական ոչ առետրային կազմակերպություն

(72) Արշալույս Թարվերդյան (AM), Շավարշ Գրիգորյան (AM), Սամվել Հովհաննիսյան (AM)

(73) «Հայկական գյուղատնտեսական ակադեմիա» պետական ոչ առետրային կազմակերպություն, Երեւան, Տերյան 74 (AM)

(54) Բերքահավաքման մեքենաների կտրող ապարատ

(57) Գյուտը վերաբերում է գյուղատնտեսական մեքենաշինությանը, մասնավորապես՝ խոտհնձի մեքենաների կտրող ապարատներին:

Կտրող ապարատն ունի հակակտրիչ թիթեղներով անշարժ հեծան, աղեղածեւ սայրերով ճոճվող կտրող սեգմենտներ եւ սեգմենտների շարժաբեր, որը պատրաստված է շուռովիկակուլիսային մեխանիզմի հետ կապված տարիչի տեսքով: Սեգմենտները տարիչին կապված են միջնամասերով՝ պղնձագրաֆիտային սահքի առանցքակալով հողակապերով, իսկ հեծանին՝ պոչամասերով:

Նվազեցվում են նշանափոխ իներցիոն ու շփման ուժերը, շփվող հանգույցների մաշվածքը, կանխվում է սեգմենտների կոտրվելու վտանգը, 4 նկ.:

(51) 7 A23G 3/00 (11) 1452 (13) A2
A23G 3/18

(21) P20030097 (22) 06.08.2003
(42) 11.12.2003

(71) Վահրամ Գաբզիմալյան (AM), Յուզաբեր Մեծոյան (AM)

(72) Վահրամ Գաբզիմալյան (AM), Յուզաբեր Մեծոյան (AM)

(73) Վահրամ Գաբզիմալյան, Երեւան, Արցախի 1, բն. 32 (AM), Յուզաբեր Մեծոյան, Երեւան, Օգանովի 68, բն. 7 (AM)

(54) Շոկոլադապատված կոնֆետների պոմադային միջուկների արտադրության եղանակ եւ դրա իրագործման կայանք

(57) Գյուտը վերաբերում է հրուշակեղենի արտադրությանը, մասնավորապես՝ շոկոլադապատված կոնֆետների պոմադային միջուկների արտադրության եղանակներին եւ դրանց իրականացման կայանքներին:

Ըստ հայտարկվող եղանակի, եփված շաքարամաթային օշարակը հարում են փրփրագոյացնող նյութի հետ: Ստացված զանգվածին ավելացնում են կակաոյի փոշու եւ յուղի խառնուրդ՝ (10-11): (1-1.05) հարաբերակցությամբ եւ կատարում դրա երկփուլ հոմացումը, նախ՝ մինչեւ 85-90°C ջերմաստիճան, այնուհետեւ՝ մինչեւ 45-50°C ջերմաստիճան: Հոմացած զանգվածը ձեւավորում են 400-500 կՊա ճնշման տակ:

Հայտարկվող եղանակի իրագործման կայանքն ունի շաքարամաթային օշարակի հավաքարան, դրա եփման ապարատ, հարող մեքենա, թմբուկային տիպի հոմացնող մեքենա, խառնիչ-մղիչ մեքենա, ձեւավորող ագրեգատ:

Ձեւավորող ագրեգատն ունի կայանքի հոմացնող մեքենային հպվող բեռնման բունկեր, սնող մատնեքավոր թմբուկ, որի արտաքին մակերեսույթի վրա կան հորիչ ձողերով խորշեր, եւ յուրաքանչյուր հորիչ ձողն ունի խտարար տարր, որն ամրակցված է թմբուկի ներքին մակերեսույթին:

Ապահովվում է շոկոլադապատված կոնֆետների պոմադային միջուկների արտադրության եղանակի եւ կայանքի պարզեցումը, 3 անկախ կետ, 3 նկար:

(51) 7 A24D 1/04 (11) 1453 (13) A2
(21) P20020135 (22) 12.07.2002
(42) 13.10.2003
(71) Սիմոն Պողոսյան (AM)
(72) Սիմոն Պողոսյան (AM)
(73) Սիմոն Պողոսյան (AM)
(74) Ա. Պետրոսյան
(54) Ծխելու պատրաստվածք
(57) Գյուտը վերաբերում է ծխախոտի ձող, գտող տարր եւ ծխափող ունեցող պատրաստվածքների արտադրությանը:

Հավասար արտաքին տրամագիծ ունեցող ծխափողը, գտող տարրը եւ ծխախոտի ձողը կատարված են որպես առանձին տարրեր, ծայրակցված են եւ միակցված թղթե օղագոտիով: Տարրերի երկարությունները համապատասխանաբար հարաբերվում են ինչպես (8-13):(1-6):(8-10):

Ջտող տարրը կարող է լինել կազմովի: Ծխափողը եւ գտող տարրը կարող են ամփոփված լինել առանձին կամ ընդհանուր ֆիցեղում (թղթե շապիկում):

Ծխափողի նյութի խտությունը եւ կոշտությունը ընտրված են՝ ելնելով ծխափողը մատներով կամ ատամներով սեղմելու աստիճանի՝ ծխողների տարբեր խմբերի հակվածությունից, 2 նկ:

(51) 7 A24D 3/04 (11) 1454 (13) A2
A24F 1/30
A24D 1/00
A24D 1/04
(21) P20020167 (22) 09.10.2002
(42) 13.10.2003
(71) Սիմոն Պողոսյան (AM)
(72) Արմեն Պողոսյան (RU)
(73) Սիմոն Պողոսյան (AM)
(74) Ա. Պետրոսյան
(54) Ծխելու պատրաստվածքների գտիչ եւ այդ գտիչով ծխելու պատրաստվածք
(57) Գյուտը վերաբերում է ծխախոտային արդյունաբերությանը եւ կարող է օգտագործվել գտիչների եւ ծխելու պատրաստվածքների, մասնավորապես՝ ծխափող ունեցող ծխելու պատրաստվածքների արտադրությունում:

Ջտիչն ունի ծխի մուտքի եւ ելքի անցքերով օժտված, մասնակիորեն հեղուկով լցված խուց եւ հաղորդակցման անցուղիներ: Գյուտի համաձայն գտիչն ունի մուտքի եւ ելքի անցքերով անցնող առանցքի նկատմամբ խցի ցանկացած դիրքում մուտքի անցքը՝ խցի հեղուկով լցված մասի հետ, իսկ ելքի անցքը՝ հեղուկից զերծ մասի հետ հաղորդակցման հնարավորությամբ անցուղիների տեղաբաշխման շարժուն սարք, որը տեղակայված է խցում:

Ծխելու պատրաստվածքն ունի ծխախոտային ձողի հետ ծայրակցված գտող մաս, որպես գտող մաս է հանդիսանում նշված գտիչը կամ նրա տարբերակներից ցանկացածը:

Ապահովվում է ծխի անցումը հեղուկի միջավայրով գտիչի մուտքի եւ ելքի անցքերով անցնող առանցքի նկատմամբ ցանկացած դիրքում եւ գտման արդյունավետության բարձրացումը, 21 նկ.:

(51) 7 A24D 3/04 (11) 1455 (13) A2
A27F 1/30
A24D 1/04

(21) P20020137 (22) 26.07.2002
(42) 13.10.2003

(71) Սիմոն Պողոսյան (AM)

(72) Արմեն Պողոսյան (RU)

(73) Սիմոն Պողոսյան (AM)

(74) Ա. Պետրոսյան

(54) Ծխելու պատրաստվածք

(57) Գյուտը վերաբերում է ծխախոտային արտադրությանը եւ կարող է օգտագործվել ծխափող ունեցող ծխելու պատրաստվածքների արտադրությունում:

Ծխելու պատրաստվածքն ունի անջրանցիկ նյութից պատրաստված գլանաձեւ ծխափող, որը մասնակիորեն լցված է հեղուկով եւ ծայրակցված է ծխախոտի ձողին: Ծխախոտի մուտքային եւ ելքային ծայրերում տեղադրված են անջրանցիկ նյութից պատրաստված խցեր, որոնցից յուրաքանչյուրն ունի առանցքային անցք եւ առանցքային հենարանային տարր: Հենարանային տարրերի վրա տեղավորված է ծխափողի առանցքի շուրջը պտտվելու հնարավորությամբ ճոճան, որն ունի ապակենտրոն ծանրուկ: Մուտքային խցի առանցքային անցքը հաղորդակցվում է ծխափողի խոռոչի այն տիրույթի հետ, որում գտնվում է ապակենտրոն ծանրուկը, իսկ ելքային խցի առանցքային անցքը՝ հակառակ տիրույթի հետ:

Բարձրանում է օգտագործման հարմարավետությունը, 5 նկ.:

(51) 7 A24D 3/04 (11) 1456 (13) A2
A24F 1/30
A24D 1/00
A24D 1/04

(21) P20020161 (22) 03.10.2002

(42) 13.10.2003

(71) Սիմոն Պողոսյան (AM)

(72) Արմեն Պողոսյան (RU)

(73) Սիմոն Պողոսյան (AM)

(74) Ա. Պետրոսյան

(54) Ծխելու պատրաստվածքների գտիչ

(57) Գյուտը վերաբերում է ծխախոտային արտադրությանը եւ կարող է օգտագործվել գտիչների եւ ծխելու պատրաստվածքների, մասնավորապես՝ ծխափող ունեցող ծխելու պատրաստվածքների արտադրությունում:

Զտիչն ունի հեղուկով մասնակիորեն լցված գլանաձեւ խուց, խցի մուտքային եւ ելքային խցաններ, որոնցից յուրաքանչյուրն ունի համառանցք հենարանային տարր եւ անցք, ծխի մուտքի եւ ելքի անցուղիներ եւ անցուղիների տեղաբաշխման սարք, որը կազմավորում է անցուղիների ազատ ծայրերի շեղումը միմյանց նկատմամբ՝ մուտքային խցանի անցքը՝ խցի հեղուկով լցված մասի հետ, իսկ ելքային խցանի անցքը՝ հեղուկից զերծ մասի հետ հաղորդակցման հնարավորությամբ: Անցուղիների տեղաբաշխման սարքն իրականացված է ճոճանի ձեւով, որը խցի առանցքի շուրջը ազատ պտտվելու հնարավորությամբ տեղակայված է հենարանային տարրերի վրա, ընդ որում ճոճանի զանգվածների կենտրոնը շեղված է պտտման առանցքի նկատմամբ եւ ձգողականության ազդեցության տակ պայմանավորում է ճոճանի դիրքի հարաբերական կայունացումը:

Բարձրացվում է օգտագործման հարմարավետությունը, 11 նկ.:

(51) 7 A43C 15/14 (11) 1457 (13) A2
(21) P20030134 (22) 03.11.2003
(42) 13.01.2004

(71) Հրաչյա Հարությունյան (AM)

(72) Հրաչյա Հարությունյան (AM)

(73) Հրաչյա Հարությունյան, Երեւան, Վարդանանց 73 (AM)

(54) Կոշիկի սահքը կանխող սարք

(57) Գյուտը վերաբերում է կոշիկի արտադրությանը, մասնավորապես՝ կոշիկի սահքը կանխող սարքերին:

Սարքն ունի ներքանի երկայնքով դասավորված եւ առնվազն մեկ երկայնական ակոսով միացված բնիկներ, որոնցից յուրաքանչյուրի անցքում տեղադրված է զսպանակած բութակ: Բութակների արտաշարժն իրականացված է ակոսում տեղադրված առաձգական ժապավենի միջոցով: Ակոսին ուղղահայաց տեղադրված է իր առանցքի նկատմամբ շրջուն ձգաձող: Առաձգական ժապավենի եւ շրջուն ձգաձողի կապը իրականացված է մետաղաճոպանի կամ ատամնավոր փոխանցիչի միջոցով: Ձգաձողը սեւեռում են ներքանում կոշտ ամրացված առաձգական հենաթիթեղի եւ նրա աշխատանքային ճակատի հետ փոխազդելու հնարավորություն ունեցող, շրջուն ձողի վրա ամրացված ելունի միջոցով:

Բարձրացվում է սահքը կանխող սարքեր կրող կոշիկների օգտագործման հուսալիությունը, 7 նկ.:

(51) 7 A61B 17/00 (11) 1458 (13) A2

(21) P20030121 (22) 17.10.2003

(42) 11.12.2003

(71) Ադրինե Ավետիսյան (AM)

(72) Ադրինե Ավետիսյան (AM)

(73) Ադրինե Ավետիսյան, Երեւան, Ներսիսյան 6ա, բն. 54 (AM)

(54) Անանցելի արցունքապարկաբորբի դեպքում արցունքապարկի պլաստիկայի եղանակ

(57) Գյուտը վերաբերում է բժշկությանը, մասնավորապես՝ անանցելի արցունքապարկաբորբի դեպքում արցունքապարկի պլաստիկայի եղանակներին:

Վիրահատական դաշտի մշակումից եւ հաղորդական անզգայացումից հետո կատարում են փափուկ հյուսվածքների գծային կտրվածք՝ կոպի ներքին կապանից 1,5-2,0մմ բարձր եւ ակնաճեղքի ներքին անկյունից 4մմ-ով ավելի կենտրոնամերձ, շարունակում այնուհետեւ արցունքակատարի երկայնքով ուղիղ գծով՝ մոտավորապես 6-17մմ երկարությամբ, ընդ որում փետուրի ծայրային մասի երկարությունը կախված է հիվանդի տարիքից: Արցունքապարկը շերտազատում են եւ առջեւի մասում կատարում գծային կտրվածք: Քթարցունքային անցուղու մեջ ներմուծում են ներպատվաստուկ, որն իրենից ներկայացնում է փետուրային թեփիկներից մաքրած եւ թռչունի 35-40 րոպե եռացրած փետուրի ծայրային մասը:

Ապահովվում է վիրահատության կատարման պարզեցում եւ անանցելիության կանխարգելում ներպատվաստուկի երկարատեւ ներծծման միջոցով:

(51) 7 A61B 17/00 (11) 1459 (13) A2

(21) P20030093 (22) 21.07.2003

(42) 13.10.2003

(71) Ալեքսան Զախոյան (AM)

(72) Ալեքսան Զախոյան (AM)

(73) Ալեքսան Զախոյան, Երեւան, Երվանդ Քոչարի 23, բն. 27 (AM)

(54) Գիտափորձում ստամոքսի մասնահատման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է որովայնային վիրաբուժությանը, մասնավորապես՝ ստամոքսի մասնահատման եղանակներին:

Կատարում են ստամոքսի ծայրատի վերջնային հատվածի պատի շճամկանային շերտերի հեռացում, իսկ ստամոքս-աղիքային բերանակցման դեպքում՝ ստամոքսի ծայրատի լորձաենթալորձային շերտերի ներազուցում եւ տասներկումատնյա աղու ու ստամոքսի հետիոսք կանխող փականի առաջացում:

Ապահովվում է դեպի ստամոքսի ծայրատ տասներկումատնյա աղու պարունակության

արտանետումը եւ կանխվում հետվիրահատական
ալկալիական հետհոսք-գաստրիտի զարգացումը,
4նկ.:

(51) 7 A61B 17/00 (11) 1460 (13) A2
(21) P20030122 (22) 17.10.2003
(42) 11.12.2003
(71) Ադրինե Ավետիսյան (AM), Ահարոն Գաբրիել-
յան (AM)
(72) Ադրինե Ավետիսյան (AM), Ահարոն Գաբրիել-
յան (AM)
(73) Ադրինե Ավետիսյան, Երեւան, Ներսիսյան
6ա, բն. 54 (AM), Ահարոն Գաբրիելյան, Երեւան,
Ազատության 14, բն. 20 (AM)
(54) Արցունքաժորանների անցելիության վերա-
կանգնման եղանակ
(57) Գյուտը վերաբերում է բժշկությանը, մասնա-
վորապես՝ արցունքաժորանների անցելիության
վերականգնման եղանակներին:

Ծորանի պատռվածքի մոտակա հատվածի
տեղայնացումից հետո Զիխերի կոնաձեւ զոնդի
միջոցով չվնասված արցունքաժորանի եւ
վնասված ծորանի հեռադիր հատվածի միջով
Ալեքսեւի զոնդի օգնությամբ անցկացնում են
հաղորդիչը, որն իրենից ներկայացնում է 0,3-
0,4մմ տրամագծով կարթաթել: Հաղորդիչի միջով
անցկացնում են 0,5-0,6մմ տրամագիծ ունեցող
ներպատվաստուկ, որի մի ծայրը տեղադրում
են վնասված ծորանի հեռադիր հատվածում:
Նույնանման ձեւով փողակագուցում են
ծորանի մոտակա հատվածը: Վերքի վրա
դնում են 4 ներծծվող կար եւ միաժամանակ
սեւեռակում ներպատվաստուկը: Հաղորդիչն
օղակաձեւ կապում են եւ սեւեռակում մաշ-
կի վրա: Վաղ հետվիրահատական շրջանում
արցունքաժորանները մերսում են՝ տեղաշար-
ժելով հաղորդիչը, եւ 14-16-րդ օրը հեռացնում
այն: Վիրափողակը թողնում են մինչեւ ներպատ-
վաստուկի լիակատար ներծծումը:

Ապահովվում է արցունքաժորանի անցե-
լիության լիակատար վերականգնում եւ

նեղացումային սպիի առաջացման կանխար-
գելում:

(51) 7 A61F 2/06 (11) 1461 (13) A2
(21) P20020150 (22) 27.08.2002
(42) 11.09.2003
(31) 60/314671 (32) 27.08.2001 (33) US
(71) Մեդինոլ Լթդ.(IL)
(72) Յակոբ Ռիխտեր (IL)
(73) Մեդինոլ Լթդ. (IL)
(74) Հ. Դավթյան
(54) Ներանոթային ստենտային համակարգ եւ
դրա ներդրման եղանակ
(57) Գյուտը վերաբերում է բժշկական տեխնի-
կային, մասնավորապես՝ ներանոթային ստեն-
տային համակարգերին եւ դրանց պատրաստման
եղանակներին:

Համակարգն ունի մեկ խոռոչով կաթետեր,
խոռոչի հետ հաղորդակցվող եւ կաթետերի
հեռավոր ծայրին գտնվող բալոն, որի վրա
տեղադրված է ստենտը: Բալոնի հեռավոր ծայրին
մոտ տեղում սեւեռված է կարճ լար: Համակարգի
հավաքածուի կազմում կան տարբեր չափերի եւ
հատկությունների լարեր, այնպես որ բժիշկը
կարող է ընտրել անհրաժեշտ ծայր ունեցող լարը
բուժվող վերքին եւ անոթին համապատասխան
եւ այն սեւեռել բալոնի հեռավոր ծայրին՝ համա-
կարգն աշխատեցնելուց առաջ, 4 անկախ կետ,
2 նկ.:

(51) 7 A61K 35/78 (11) 1462 (13) A2
(21) P20030113 (22) 03.10.2003
(42) 11.12.2003
(71) «Հայկական գյուղատնտեսական
ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմա-
կերպություն (AM)
(72) Անուշ Հակոբյան (AM), Սուրեն Գրիգորյան
(AM)
(73) «Հայկական գյուղատնտեսական ակադեմիա»

պետական ոչ առևտրային կազմակերպություն,
Երեւան, Տերյան 74 (AM)

(54) Հակամանրեային պատրաստուկ

(57) Գյուտը վերաբերում է բուսական ծագում
ունեցող դեղագործական պատրաստուկներին,
մասնավորապես՝ հակամանրեային պատրաս-
տուկներին եւ կարող է կիրառվել վարակային
հիվանդությունների բուժման համար:

Առաջարկվում է վարակային հիվանդու-
թյունների, հատկապես՝ սիբիրախտի բուժման
համար հակամանրեային պատրաստուկ, որը
ներառում է փիճի յուղ եւ 20% էթիլային սպիրտ,
բաղադրամասերի հետեւյալ հարաբերակցու-
թյամբ, զանգվ. %.

փիճի յուղ	3.1 – 40
20% էթիլային սպիրտ	60 – 96.9:

Ապահովվում է բուժման արդյունավետու-
թյունը եւ նվազեցվում պատրաստուկի ինք-
նարժեքը:

(51) 7 A63G 21/20 (11) 1463 (13) A2
(21) P20030095 (22) 29.07.2003
(42) 13.10.2003

(71) Արեգ ճարակյան (AM)

(72) Արեգ ճարակյան (AM)

(73) Արեգ ճարակյան, Երեւան, Երվանդ Քոչարի
5, բն. 48 (AM)

(54) Ատրակցիոն

(57) Գյուտը վերաբերում է զանգվածային զվար-
ճացուցիչ ատրակցիոններին, մասնավորապես՝
ճոպանի վրայով շարժվող սայլակառքերին:

Ատրակցիոնը իրենից ներկայացնում է ճոպանի
վրայով շարժվող մարդատար սայլակառք:
ճոպանը թեքությամբ ամրացված է իր երկու
ծայրերով տարբեր բարձրություն ունեցող եւ
իրարից հեռացված հորիզոնական ուղղությամբ
հենարաններին:

Սայլակառքը կարող է հենվել ճոպանին
առանձին սայլակի միջոցով, որից սայլակառքը

անջատվում է վայրէջքային մակերեսին
հպվելու պահին եւ հետագայում շարժվում է
իններցիայով:

Պարզեցվում է ատրակցիոնի կառուցվածքը,
1 նկ.:

(51) 7 B01D 9/02 (11) 1464 (13) A2
(21) P20030070 (22) 13.06.2003
(42) 11.09.2003

(71) Նիկոլայ Գրիգորյան (AM)

(72) Նիկոլայ Գրիգորյան (AM)

(73) Նիկոլայ Գրիգորյան, Երեւան, Տիգրան Մեծի
27/2, բն. 7 (AM)

(54) Բյուրեղարար

(57) Գյուտը վերաբերում է քիմիական արդյունա-
բերությանը, մասնավորապես՝ բյուրեղարարներին
եւ կարող է օգտագործվել աղային լուծույթներից
աղ ստանալու համար:

Բյուրեղարարն ունի աղի բյուրեղների
առաջացման բլոկ, որը պարունակում է հո-
րանավոր աշտարակ, հորանում տեղադրված
փոշեցրման առաջին ծայրափողակներ, բյու-
րեղների եւ մայր լուծույթի հավաքման առաջին
հանգույց, որը կազմված է աշտարակի ստորին
մասում տեղակայված առաջին լցարանից եւ դրա
հետ խողովակաշարի միջոցով հաղորդակցվող ու
աշտարակից դուրս գտնվող բյուրեղների առաջին
պարզարանից, խողովակավոր խտարար եւ պոմպ,
ընդ որում առաջին լցարանը, պոմպը, խտարարը
եւ փոշեցրման առաջին ծայրափողակները
շրջանառու շղթայի տարրեր են: Բյուրեղարարն
ունի նաեւ բյուրեղների եւ մայր լուծույթի
հավաքման առնվազն մեկ լրացուցիչ հանգույց,
ընդ որում լրացուցիչ լցարանը հաղորդակցում է
առաջին լցարանի հետ, իսկ առաջին եւ լրացուցիչ
լցարանների հատակներն արված են կոնաձեւ:
Բյուրեղարարն ունի առնվազն մեկ նույնական
լրացուցիչ շրջանառու շղթա, իսկ լրացուցիչ
հանգույցի պարզարանի ստորին մասում տե-
ղակայված է մայր լուծույթի վնասակար նյութերով
հագեցված ստորին շերտի անընդհատ հեռացման
ելքային խողովակառոտը:

Բարձրացվում է աղի ստացման տեխնոլոգիա-
կան պրոցեսի արտադրողականությունը, 2 նկ.:

(51) 7 B29C 55/14 (11) 1465 (13) A2
 (21) P20030084 (22) 04.07.2003
 (42) 13.10.2003
 (71) Մարսել Մարտիրոսյան (AM)
 (72) Մարսել Մարտիրոսյան (AM)
 (73) Մարսել Մարտիրոսյան, Երեւան, Կոմիտասի
 1, բն. 80 (AM)

(54) Պոլտրուզիայի տեխնոլոգիական գիծ
 (57) Գյուտը վերաբերում է պլաստմասսաների
 մշակմանը, մասնավորապես՝ պոլտրուզիայի
 տեխնոլոգիական գծերին եւ կարող է օգտա-
 գործվել պոլիմերային նյութերից տարբեր պրո-
 ֆիլի իրերի ստացման համար:

Տեխնոլոգիական գիծը կազմված է հաջոր-
 դաբար տեղակայված ամրանավորող թելիկների
 վահանակից, տոգորման գուռից, նախնական
 չորացման վառարանից, փաթաթման թմբուկից,
 ձեւավորող թելքակորզանից, տաքացվող մամ-
 լակաղապարից եւ ձգող հարմարանքից: Տրված
 պրոֆիլի իրերի ստացման համար, թմբուկից
 հանված անհրաժեշտ թվով փաթույթների
 թելիկներից կազմված խուրճը ձգող հարմա-
 րանքի օգնությամբ անց են կացնում ձեւա-
 վորող թելքակորզանով եւ տաքացվող մամլա-
 կաղապարով:

Պարզեցվում է պոլտրուզիայի տեխնոլո-
 գիական պրոցեսը, 3նկ:

(51) 7 C07D 239/72 (11) 1466 (13) A2
 C07D 239/91
 (21) P20030118 (22) 16.10.2003
 (42) 11.12.2003
 (71) “Երեւանի պետական համալսարան” պետա-
 կան ոչ առետրային կազմակերպություն(AM)
 (72) Գագիկ Մելիքյան (AM), Աննա Հովհաննիսյան
 (AM), Լիլիթ Արիստակեսյան (AM), Աիդա Ավե-
 տիսյան (AM)
 (73) “Երեւանի պետական համալսարան” պետա-
 կան ոչ առետրային կազմակերպություն, Երեւան,
 Ալեք Մանուկյան 1(AM)
 (54) 3-Արիլ-4-խինազոլինոնի ածանցյալների
 ստացման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է օրգանական քիմիայի
 բնագավառին, մասնավորապես՝ N-տեղակալված
 4-խինազոլինոնի ածանցյալների ստացման եղա-
 նակներին, որոնք կարող են կիրառվել քնաբեր
 եւ ցավազրկող դեղամիջոցների արտադրության
 մեջ:

Անտրանիլաթթվի մեթիլային էսթերը են-
 թարկում են ցիկլակոնդենսացման արոմատիկ
 ամինների հետ: Պրոցեսը կատարում են երկու
 փուլով. առաջին փուլում անտրանիլաթթվի
 մեթիլային էսթերը եռացնում են 20-22 ժամ երկ-
 մեթիլֆորմամիդի երկմեթիլացետալի հետ քսիլոլի
 միջավայրում, որից հետո թորում քսիլոլը, երկրորդ
 փուլում ստացված միջանկյալ անտրանիլաթթվի
 մեթիլային էսթերի երկմեթիլամինաածանցյալին
 ավելացնում են արոմատիկ ամին եւ սառցային
 քացախաթթու եւ եռացնում 18-20 ժամ:

Ընդլայնվում են եղանակի տեխնիկական
 հնարավորությունները, ստացվում են N-տեղա-
 կալված 4-խինազոլինոններ տարբեր ֆունկ-
 ցիոնալ խմբերով:

(51) 7 C07D 333/52 (11) 1467 (13) A1
 A61K 31/38
 (21) P20000071 (22) 28.07.2000
 (42) 19.01.2001
 (31) 60/146,286 (32) 29.07.1999 (33) US
 60/147,570 06.08.1999 US
 60/149,773 19.08.1999 US

(71) Էլի Լիլի ընդ քամփնի (US)
 (72) Ջյուլի Բեյ Բուշ (US), Փրեսթոն Չարլզ
 Քոնրադ (US), Մերլին Ջերարդ Ֆլոն (US), Ուեյն
 Դուգլաս Լյուք (US)
 (73) Էլի Լիլի ընդ քամփնի (US)
 (74) Հ. Դավթյան
 (54) Բյուրեղային 6-հիդրօքսի-3-(4-[2-(պիպերի-
 դին-1-իլ) էթօքսի] ֆենօքսի)-2-(4-մեթօքսիֆենիլ)
 բենզոլ [b] թիոֆեն հիդրոքլորիդի հիդրատ (F-I),
 դեղագործական բաղադրանյութ, ստացման
 եղանակ եւ կիրառում
 (57) Գյուտը վերաբերում է քիմիայի բնագա-
 վառին, մասնավորապես՝ 6-հիդրօքսի-3-(4-

[2-(պիպերիդին-1-իլ)էթօքսի]ֆենօքսի)-2-(4-մեթօքսիֆենիլ)բենզո [b] թիոֆենի հիդրոքլորիդ հիդրատի նոր բյուրեղային ձեւին, դրա ստացման եղանակին, այն պարունակող դեղագործական բաղադրանյութին եւ այդ ձեւի կիրառմանը ախտաբանական վիճակների արգելակման համար:

6-հիդրօքսի-3-(4-[2-(պիպերիդին-1-իլ)էթօքսի]ֆենօքսի)-2-(4-մեթօքսիֆենիլ)բենզո[b] թիոֆեն հիդրոքլորիդ հիդրատը (F-I) բնութագրվում է ռենտգենագրով, որում առկա են հետևյալ գագաթները՝ 7.9 ± 0.2 , 10.7 ± 0.2 , 14.9 ± 0.2 , 15.9 ± 0.2 , 18.3 ± 0.2 և $20.6 \pm 0.2^\circ$ 2 θ -ում, ստացված ճառագայթման պղնձե աղբյուրից:

F-I-ը ստացվում է 6-հիդրօքսի-3-(4-[2-(պիպերիդին-1-իլ)էթօքսի]ֆենօքսի)-2-(4-մեթօքսիֆենիլ)բենզո [b] թիոֆեն հիդրոքլորիդի քառա-հիդրոֆուրանից բյուրեղացումով:

Դեղագործական բաղադրանյութը պարունակում է F-I, մեկ կամ ավելի դեղագործական կրողներ, նոսրացուցիչներ կամ լցանյութեր:

Ստացվում է բարձր աստիճանի մաքրության (օրգանական լուծիչից զերծ) եւ բյուրեղայնության 6-հիդրօքսի-3-(4-[2-(պիպերիդին-1-իլ)էթօքսի]ֆենօքսի)-2-(4-մեթօքսիֆենիլ) բենզո [b] թիոֆեն հիդրոքլորիդ հիդրատ: 4 անկախ կետ:

(51) 7 C07D 333/52 (11) 1468 (13) A1
A61K 31/38

(21) P20000070 (22) 28.07.2000

(42) 19.01.2001

(31) 60/146,184 (32) 29.07.1999 (33) US

60/147,642 06.08.1999 US

60/149,820 19.08.1999 US

(71) Էլի Լիլի ընդ քամփնի (US)

(72) Ջյուլի Բեյ Բուշ (US), Ֆրեսթոն Չարլզ Քոնրադ (US), Մերլին Ջերարդ Ֆլոմ (US)

(73) Էլի Լիլի ընդ քամփնի (US)

(74) Յ. Դավթյան

(54) Բյուրեղային 6-հիդրօքսի-3-(4-[2-(պիպերիդին-1-իլ) էթօքսի] ֆենօքսի)-2-(4-մեթօքսիֆենիլ) բենզո [b] թիոֆենի հիդրոքլորիդ հիդրատ (F-III),

դեղագործական բաղադրանյութ, ստացման եղանակ եւ կիրառում

(57) Գյուտը վերաբերում է քիմիայի բնագավառին, մասնավորապես՝ 6-հիդրօքսի-3-(4-[2-(պիպերիդին-1-իլ)էթօքսի]ֆենօքսի)-2-(4-մեթօքսիֆենիլ)բենզո [b] թիոֆենի հիդրոքլորիդի նոր բյուրեղային ձեւին, դրա ստացման եղանակին, դեղագործական բաղադրանյութին եւ այդ ձեւի կիրառմանը ախտաբանական վիճակների արգելակման համար:

6-հիդրօքսի-3-(4-[2-(պիպերիդին-1-իլ)էթօքսի]ֆենօքսի)-2-(4-մեթօքսիֆենիլ)բենզո[b] թիոֆեն հիդրոքլորիդ հիդրատը (F-III) բնութագրվում է ռենտգենագրով, որում առկա են հետևյալ գագաթները՝ 4.6 ± 0.2 , 7.8 ± 0.2 , 9.3 ± 0.2 , 14.0 ± 0.2 , 17.6 ± 0.2 , 20.8 ± 0.2 և $24.3 \pm 0.2^\circ$ 2 θ -ում, ստացված $25 \pm 2^\circ\text{C}$ ջերմաստիճանում եւ $35 \pm 10\%$ հարաբերական խոնավության պայմաններում, ճառագայթման պղնձե աղբյուրից:

F-III-ը ստացվում է 6-հիդրօքսի-3-(4-[2-(պիպերիդին-1-իլ)էթօքսի]ֆենօքսի)-2-(4-մեթօքսիֆենիլ)բենզո[b]թիոֆեն հիդրոքլորիդի իզոպրոպանոլի եւ ջրի խառնուրդից բյուրեղացումով:

Դեղագործական բաղադրանյութը պարունակում է F-III-ը, մեկ կամ ավելի դեղագործական կրողներ, նոսրացուցիչներ կամ լցանյութեր:

Ստացվում է բարձր աստիճանի մաքրության (օրգանական լուծիչից զերծ) եւ բյուրեղայնության 6-հիդրօքսի-3-(4-[2-(պիպերիդին-1-իլ)էթօքսի] ֆենօքսի)-2-(4-մեթօքսիֆենիլ)բենզո[b]թիոֆեն հիդրոքլորիդ հիդրատ, 4 անկախ կետ:

(51) 7 C07D 495/04 (11) 1469 (13) A2

(21) P20030117 (22) 16.10.2003

(42) 11.12.2003

(71) “Երեւանի պետական համալսարան” պետական ոչ առևտրային կազմակերպություն(AM)
(72) Գագիկ Մելիքյան (AM), Աննա Յովհաննիսյան (AM), Անուշ Գեւորգյան (AM), Աիդա Ավետիսյան (AM)

(73) “Երեւանի պետական համալսարան” պետական ոչ առեւտրային կազմակերպություն, Երեւան, Ալեք Մանուկյան 1(AM)

(54) 3-Ալկիլ-5,6-երկմեթիլ-4-օքսոթիենա[2,3-ժ]պիրիմիդինի ածանցյալների ստացման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է օրգանական քիմիայի բնագավառին, մասնավորապես՝ N-տեղակալված օքսոթիենա[2,3-ժ]պիրիմիդինի ածանցյալների ստացման եղանակներին, որոնք կարող են կիրառվել հակաալերգիկ դեղամիջոցների արտադրության մեջ:

2-ամինա-3-կարբեթօքսի-4,5-երկմեթիլթիոֆենը ենթարկում են ցիկլակոնդենսացման հետերոարոմատիկ կամ արոմատիկ տեղակալված ալիֆատիկ ամինների հետ: Պրոցեսը կատարում են երկու փուլով. առաջին փուլում ելանյութը եռացնում են 6-7 ժամ երկմեթիլֆորմամիդի երկմեթիլացետալի հետ քսիլոլի միջավայրում, որից հետո թորում քսիլոլը, երկրորդ փուլում՝ ստացված միջանկյալ երկմեթիլամինաածանցյալին ավելացնում են համապատասխան ամին եւ եռացնում 30-32 ժամ քսիլոլի միջավայրում:

Ընդլայնվում են եղանակի տեխնիկական հնարավորությունները, ստացվում են N-տեղակալված օքսոթիենա[2,3-ժ]պիրիմիդիններ տարբեր ֆունկցիոնալ խմբերով:

(51) 7 C09J 131/04 (11) 1470 (13) A2
C08F 20/06

(21) P20030091 (22) 14.07.2003
(42) 11.11.2003

(71) Մեծլում Երիցյան (AM)

(72) Արման Նորավյան (AM), Ռայա Քարամյան (AM), Սմբատ Շահինյան (AM)

(73) Մեծլում Երիցյան, Երեւան, Թոթովենցի 6/1, բն. 17 (AM)

(54) Պոլիվինիլացետատային սոսինձ

(57) Գյուտը վերաբերում է սոսինձների բաղադրանյութերին, մասնավորապես՝ պոլիվինիլացետատային ջրային դիսպերսիայի հիման վրա:

Սոսինձը պարունակում է ДФ 47/7 մակնիշի պոլիվինիլացետատային ջրային դիսպերսիա եւ լցանյութ՝ ակտիվացրած կաոլինի՝ օրթոֆոսֆորական թթվով ճեղքման արգասիքի բորաթթվով մշակման ադուկտ, բաղադրամասերի հետեւյալ հարաբերակցությամբ (զանգվ. %).

պոլիվինիլացետատային

ջրային դիսպերսիա 99,2-99,9

լցանյութ 0,1-0,8:

Բարելավվում են սոսինձի ֆիզիկամեխանիկական հատկությունները, կրճատվում է սոսինձման ժամանակը:

(51) 7 C10L 5/22 (11) 1471 (13) A2
B29C 47/36

(21) P20030072 (22) 16.06.2003
(42) 13.10.2003

(71) Սուրեն Նիկողոսյան (AM), Ֆաուստո Ջանգոկիա (IT), Ջրայր Դեմիրչյան (AM)

(72) Սուրեն Նիկողոսյան (AM), Ֆաուստո Ջանգոկիա (IT), Ջրայր Դեմիրչյան (AM)

(73) Սուրեն Նիկողոսյան, Երեւան, Տպագրիչների 9, բն. 12 (AM), Ֆաուստո Ջանգոկիա, Իտալիա, 63010, Սանելպիդիո Ամառե, վիա Վեկկիա 1311 (IT), Ջրայր Դեմիրչյան, Երեւան, Թումանյան 12, բն. 41 (AM)

(54) Բրիկետներ ստանալու սարքավորում

(57) Գյուտը վերաբերում է փայտամշակման բնագավառին, մասնավորապես՝ փայտյա թափոնների վերամշակմանը եւ կարող է օգտագործվել բրիկետների արտադրության մեջ:

Գյուտի էությունը կայանում է նրանում, որ սարքավորման մեջ ներմուծված է խառնուրդիչ, որի մեջ զուգահեռաբար ըստ բարձրության տեղադրված են երկու կամ ավելի համապատասխան պարամետրեր ունեցող փոխադրիչ պտուտակրիչային մեխանիզմներ, որոնք հերմետիկ տարողության միջոցով կապված են խառնիչի ֆունկցիա կատարող գլխավոր պտուտակակրիչի հետ, վերջինս միացված է սնուցիչին, որի մեջ տեղադրված

է լրացուցիչ խառնիչ մեխանիզմ՝ պտուտակի տեսքով: Խառնիչը սնիչի հետ միասին միացված է բրիկետներ ձեւավորող պտուտակիչային մեխանիզմին եւ բեռնաթափող պատուհանների միջոցով կապված է պտուտակիչային մեխանիզմի մուտքի հետ: Պտուտակիչային մեխանիզմի իրանը եւ պտուտակիչը ունեն կոնաձեւ տեսք, որոշակի անկյան անկումով, որը վերջանում է ծայրափողով: Ծայրափողի վրա պարագծով 1/3 երկարությամբ արված են տարբեր տրամագծերի անցքեր:

Պարզեցվում է կառուցվածքը, բարձրանում է արտադրանքի որակը, 6 նկ.:

(51) 7 C10L 5/22 (11) 1472 (13) A2
B29C 47/36
(21) P20030071 (22) 16.06.2003
(42) 13.10.2003
(71) Սուրեն Նիկողոսյան (AM), Ֆաուստո Ջանգոկիա (IT), Հրայր Դեմիրչյան (AM)
(72) Սուրեն Նիկողոսյան (AM), Ֆաուստո Ջանգոկիա (IT), Հրայր Դեմիրչյան (AM)
(73) Սուրեն Նիկողոսյան, Երեւան, Տպագրիչների 9, բն.12 (AM), Ֆաուստո Ջանգոկիա, Իտալիա, Սանելլաիդիո Ամարե, վիա Վեկկիա 1311 (IT), Հրայր Դեմիրչյան, Երեւան, Թումանյան 12, բն. 41 (AM)
(54) Խառնիչ
(57) Գյուտը վերաբերում փայտամշակման բնագավառին, մասնավորապես փայտյա թափոնների վերամշակմանը եւ կարող է օգտագործվել հոսուն նյութերի խառնման համար:

Խառնիչն ունի խառնիչ սարքավորումներ եւ նյութերի քանակի կարգավորիչներ ունեցող բունկերներ:

Քանակի կարգավորիչներն իրականացված են համապատասխան պարամետրեր ունեցող եւ ըստ բարձրության իրար նկատմամբ զուգահեռ դասավորված փոխադրիչ պտուտակիչային մեխանիզմների տեսքով, որոնց ելքերը խողովակի միջոցով կապված են խառնիչ ֆունկցիա կատարող գլխավոր պտուտակիչի մուտքի հետ:

Գլխավոր պտուտակիչի ելքը միացված է սնուցիչի հետ, որի մեջ տեղադրված է թիակների տեսք ունեցող լրացուցիչ խառնիչ մեխանիզմ:

Պարզեցվում է կառուցվածքը, բարձրացվում է արտադրանքի որակը, 1 նկ.:

(51) 7 C12N 1/20 (11) 1473 (13) A2
C12R 1/23
(21) P20030049 (22) 10.04.2003
(42) 11.09.2003
(71) Ֆլորա Տխրունի (AM)
(72) Ֆլորա Տխրունի (AM), Ռոզա Մադոյան (AM), Ծովինար Բալաբեկյան (AM), Լեւոն Սահակյան (AM), Մանվել Մանրիկյան (AM), Հերմինե Համբարձումյան (AM), Սվետլանա Ավագյան (AM)
(73) Ֆլորա Տխրունի, Երեւան, Մոլդովական 50/4, բն.6 (AM)
(54) Առավել վտանգավոր վարակների հարուցիչների դեմ կենսաբանորեն արդյունավետ նյութ արտադրող *Lactobacillus acidophilus* 1991 շտամ եւ այդ շտամով արտադրվող նյութ
(57) Գյուտը վերաբերում է կենսատեխնոլոգիային, մասնավորապես՝ կենսաբանորեն արդյունավետ նյութեր արտադրող շտամներին եւ կարող է օգտագործվել առավել վտանգավոր վարակների հարուցիչների դեմ դեղագործական պատրաստուկների արտադրությունում:

Lactobacillus acidophilus 1991 շտամը ստանում են *Lactobacillus acidophilus* n.v. EP 317/402 "Наринэ" շտամից սելեկցիայի արդյունքում ըստ հակաազդիչ ակտիվությանը առավել վտանգավոր վարակիչների նկատմամբ:

Շտամի հատկանիշները կայուն են: Շտամը ավանդադրված է արդյունաբերական շտամների համառուսաստանյան հավաքածուում եւ ունի ավանդադրման համար՝ BKIM B-6257: Հակավարակային ակտիվությունը պայմանավորված է շտամից անջատված կենսաբանորեն ակտիվ նյութով:

Ընդլայնվում է հակավարակային միջոցների տեսականին, 2 անկախ կետ:

(51) 7 C22B 1/216 (11) 1474 (13) A2
C01F 7/06

(21) P20030104 (22) 10.09.2003
(42) 11.11.2003

(71) Բենիկ Չարությունյան (AM), Սերգեյ Սահարունյան (AM), Իրինա Մակարյան (AM)

(72) Բենիկ Չարությունյան (AM), Սերգեյ Սահարունյան (AM), Իրինա Մակարյան (AM)

(73) Բենիկ Չարությունյան, Հրազդան, Կենտրոն 48, բն. 11 (AM), Սերգեյ Սահարունյան, Երեւան, Գրիբոյեդովի 3, բն. 33 (AM), Իրինա Մակարյան, Երեւան, Գրիբոյեդովի 5ա, բն. 21 (AM)

(54) Նեֆելինային սիենիտների կոմպլեքսային վերամշակման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է հանքանյութերի, մասնավորապես՝ նեֆելինային սիենիտների վերամշակման եղանակներին եւ կարող է կիրառվել արգնահողի, սոդայի, պոտաշի, մատրիումի մեթասիլիկատի, սիլիկահողի եւ այլ նյութերի արտադրության մեջ:

Նեֆելինային սիենիտների քանակության 20-50%-ը ենթարկվում են մալուխլավային հարստացման 200-220°C ջերմաստիճանում կաուստիկ սոդայի առկայությամբ, ստացված մատրիումի մեթասիլիկատի (Na_2SiO_2) լուծույթը վերափոխում են իննջրյա մատրիումի մեթասիլիկատի ($\text{Na}_2\text{SiO}_2 \times 9\text{H}_2\text{O}$), իսկ ալյումինով հարստացված նստվածքը ավելացնում են մանրացված առաջնային նեֆելինային սիենիտների մնացած քանակությանը, կրաքարի եւ սոդայի լուծույթին, պատրաստված բովախառնուրդը ենթարկում են եռակալման 1200-1250°C ջերմաստիճանում, սառեցնում ստացված եռակալվածքը, մանրացնում կաուստիկ սոդայի առկայությամբ, ալկալահանում, որից հետո քամելով անջատում են նստվածքը ալյումինատային լուծույթից, որը վերամշակում են արգնահողի, պոտաշի եւ սոդայի, իսկ նստվածքը վառում են եւ օգտագործում ցեմենտի արտադրությունում, ընդ որում, կրաքարի եւ սոդայի լուծույթը վերցնում են բովախառնուրդում $\text{CaO}:\text{SiO}_2 = 2:1$ հարաբերակցության պահպանման հաշվարկով:

Նվազեցվում է ալյումինով աղքատ նեֆելինային

հանքանյութերի վերամշակման պրոցեսի էներգատարողությունը:

(51) 7 E02B 13/00 (11) 1475 (13) A2
(21) P20030111 (22) 25.09.2003
(42) 11.11.2003

(71) Մարտին Մակարյան (AM)

(72) Մարտին Մակարյան (AM)

(73) Մարտին Մակարյան, Երեւան, Բակունցի 16 (AM)

(54) Հորիզոնական ջրահավաք ակոսների համակարգ

(57) Գյուտը վերաբերում է ողողամաշման ենթարկված հողերի եւ արոտավայրերի վերականգնման համակարգերին, մասնավորապես՝ ջրահավաք ակոսների համակարգերին:

Հորիզոնական ջրահավաք ակոսների համակարգը կազմված է սարի լանջին արված ակոսներից եւ ակոսի ներքեւի եզրին եւ ծայրերին տեղադրված հողաթմբերից: Ակոսները արված են լանջի ջրբաժանի վերին սահմանից սկսած, ընդ որում ակոսների խորությունը, լայնությունը եւ լանջի երկայնական ուղղությամբ ակոսների միջեւ հեռավորությունը բավարարում են հետեւյալ պայմաններին, սմ՝ $30 < a/\sin\alpha < 200$, $25 < b/\sin\alpha < 160$, $600 < s/\sin\alpha < 3000$, որտեղ՝ a -ն ակոսի լայնությունն է, b -ն ակոսի խորությունն է, s -ը լանջի երկայնական ուղղությամբ ակոսների միջեւ հեռավորությունն է, $\sin\alpha$ -ն լանջի թեքության անկյունն է:

Կանխվում են հողերի ողողամաշումը եւ հեղեղումները, 2 նկ.:

(51) 7 E04B 5/20 (11) 1476 (13) A2
(21) P20030106 (22) 18.09.2003
(42) 11.12.2003

(71) Յուրի Սաֆարյան (AM), «Երեւանի ճարտարապետության եւ շինարարության պետական համալսարան» պետական ոչ առետրային կազմակերպություն (AM)

(72) Ալբերտ Սարգսյան (AM), Արմեն Սարգսյան (AM)

(73) Յուրի Սաֆարյան, Երեւան, Սայաթ-Նովայի 18, բն. 63 (AM), «Երեւանի ճարտարապետության եւ շինարարության պետական համալսարան» պետական ոչ առետրային կազմակերպություն, Երեւան, Տերյան 105 (AM)

(54) Պատուհան

(57) Գյուտը վերաբերում է շինարարության բնագավառին, մասնավորապես՝ պատուհանների կառուցվածքներին:

Պատուհանն ունի շրջակապ, փեղկեր, պահանգային շրջանակներ, սեղմող հարմարանքներ, խցանող միջադիրների միջոցով պատուհանի փեղկերում տեղակայված առնվազն երկու ապակիներ, որոնք ունեն հավասար զանգված: Փեղկերը շրջակապին ամրակցված են տեղաշարժվող ծխնիների օգնությամբ:

Ապակիներից մեկը հոծ է, իսկ մյուսը՝ կազմովի եւ կազմված է ապակու երկու կամ ավելի շերտերից, ընդ որում կազմովի ապակիների ծռման կոշտությունը առնվազն հինգ անգամ գերազանցում է հոծ ապակիների ծռման կոշտությանը:

Բարելավվում է պատուհանի ձայնամեկուսացումը, 4 նկ.:

(51) 7 E04H 9/02 (11) 1477 (13) A2
E02D 27/34

(21) P20030100 (22) 13.08.2003

(42) 11.11.2003

(71) Ռազմիկ Աթաբեկյան (AM), Վահան Աթաբեկյան (AM)

(72) Ռազմիկ Աթաբեկյան (AM), Վահան Աթաբեկյան (AM)

(73) Ռազմիկ Աթաբեկյան, Վանաձոր, Ուսանողական 8/15 (AM), Վահան Աթաբեկյան, Վանաձոր, Ուսանողական 8/15 (AM)

(54) Կառուցվածքների սեյսմամեկուսացման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է սեյսմակայուն շինա-

րարությանը, մասնավորապես՝ կառուցվածքների սեյսմամեկուսացման եղանակներին:

Եղանակը կայանում է նրանում, որ կառուցվածքի համար փորում են փոսորակ, որի մեջ տեղակայում են 0,5-0,6 ՄՊա ճնշմանը դիմակայող արհեստական խտացված խճավազային համատարած բարձ, որի վրա կառուցում են հիմքերը, իսկ կառուցվածքի ստորգետնյա կողային մակերեւույթների եւ գրունտի միջեւ թողնում են սեյսմիկ դիմամիկ ճնշման փոխանցումը կանխող բացակ:

Եղանակը հնարավորություն է տալիս նվազեցնել սեյսմիկ ազդեցության մեծությունը, 1 նկ.:

(51) 7 E05B 25/00 (11) 1478 (13) A2

(21) P20030075 (22) 19.06.2003

(42) 11.09.2003

(71) Ալբերտ Պողոսյան (AM)

(72) Ալբերտ Պողոսյան (AM)

(73) Ալբերտ Պողոսյան, Երեւան, Շիրազի 20, բն. 30 (AM)

(54) Փականք

(57) Գյուտը վերաբերում է փականքներին:

Փականքն ունի իրան, նրա անցքի մեջ պտտվելու հնարավորությամբ տեղակայված երկայնական կտրվածքներով միջուկ, որի մեջ դասավորված են փակիչ սկավառակները, անշարժ սկավառակը եւ անշարժ տափօղակները, սեւեռող բույթ: Համաձայն առաջարկության, իրանի անցքի մակերեւույթի վրա արված է անցքին համառանցք, օղակաձեւ հանվածք, որի մակերեւույթի վրա արված է աստիճանաձեւ պատ ունեցող երկայնական ակոս: Ակոսի մեջ տեղակայված է զսպանակված զլանաձեւ բույթ, որը համագործակցում է սեւեռող բույթի հետ համապատասխան պահերին:

Բարելավվում են փականքի շահագործման հնարավորությունները, 5 նկ.:

(51) 7 E05B 25/00 (11) 1479 (13) A2
 (21) P20030089 (22) 09.07.2003
 (42) 11.09.2003
 (71) Ալբերտ Պողոսյան (AM)
 (72) Ալբերտ Պողոսյան (AM)
 (73) Ալբերտ Պողոսյան, Երեւան, Շիրազի 20, բն.
 30 (AM)
 (54) Փականք
 (57) Գյուտը վերաբերում է փականքներին:

Փականքն ունի իրան, որի մեջ պտտվելու հնարավորությամբ տեղակայված է միջուկը, վերին եւ ստորին փակիչ զսպանակված բույքեր՝ համառանցք տեղակայված իրանի եւ միջուկի շառավղային անցքերի մեջ, եւ բանալի:

Համաձայն գյուտի, միջուկի շառավղային անցքերի մեջ ստորին փակիչ բույքերից առաջ տեղակայված են պտտվելու հնարավորությամբ զնդիկներ, որոնց տրամագծերին համապատասխան ստորին փակիչ զսպանակված բույքերի ճակատային մասում արված է զնդածեւ հանվածք, իսկ բանալին փակիչ զսպանակված բույքերի հետ համագործակցում է զնդիկների միջոցով:

Բարձրացվում է փականքի երկարակեցությունը, 1 նկ.:

ճնշակ, որի առաջին աստիճանը եռամուտ շնեկային է՝ շնեկների քայլի աստիճանական նվազումով, իսկ երկրորդը՝ մղման ռոտացիոն, որը կազմված է երկու անշարժ խցիկից: Խցիկներում հերմետիկորեն տեղակայված են առանցքային լիսեռին կոշտ ամրակցված իրար հակադիր թիակներ, եւ խցիկները կից ունեն թմբուկային բաշխիչ արգելակներ, որոնք լիսեռին զուգահեռ առանցքով եւ լիսեռի պտտման ուղղությամբ հակառակ ուղղությամբ ունեն նույն անկյունային արագությամբ պտտվելու հնարավորություն: ճնշակի վերջին աստիճանի ծայրին տեղակայված են լայնական հարթության մեջ հավասարաչափ անկյան տակ դասավորված այրման խցիկներ, որոնք ունեն վառելիքի մատուցման անցուղիներ: Ծայրափողակներում տեղակայված են առանցքային լիսեռի եւ թմբուկային արգելակների հետ համագործակցող, իրար նկատմամբ հակառակ ուղղությամբ պտտվող նվազող քայլերով մեկական եռամուտ շնեկներ, ընդ որում ծայրափողակներն իրենց ներքին մակերեւույթին ունեն շնեկների փաթույթին հակառակ ուղղված նույն քայլով ակոսներ:

Տնտեսվում է վառելիքը, փոքրանում են շարժիչի եզրաչափերը, 6 նկ:

(51) 7 F02K 3/00 (11) 1480 (13) A2
 F02K 5/00
 (21) P20030062 (22) 14.05.2003
 (42) 11.12.2003
 (71) Կոլյա Շահնազարյան (AM)
 (72) Կոլյա Շահնազարյան (AM)
 (73) Կոլյա Շահնազարյան, Երեւան, Թադեւոսյան
 14, բն. 11 (AM)
 (54) Ռեակտիվ շարժիչ
 (57) Գյուտը վերաբերում է ինքնաթիռաշինությանը, մասնավորապես՝ ռեակտիվ շարժիչներին:

Ռեակտիվ շարժիչն ունի գլանային եւ երկու ծայրափողակ ունեցող կոնական հատվածամասերից կազմված սնամեջ իրան, գլանային հատվածամասում առանցքային լիսեռ, լիսեռի վրա ամրակցված օդային երկաստիճան

(51) 7 F16H 27/00 (11) 1481 (13) A2
 (21) P20030066 (22) 20.05.2003
 (42) 11.08.2003
 (71) «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)
 (72) Սուրիկ Հարությունյան (AM), Ավետիք Քառյան (AM), Լավրենտի Շեկյան (AM)
 (73) «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, Երեւան, Տերյան 105 (AM)
 (54) Բռունցքային մեխանիզմ
 (57) Գյուտը վերաբերում է մեքենաշինությանը, մասնավորապես բռունցքային մեխանիզմներին:

Բռուճցային մեխանիզմը պարունակում է իրանի վրա տեղադրված մուտքային սռնի, որն ունի իր առանցքի շուրջը պտտվելու հնարավորություն: Մեխանիզմն ունի առաջին բռուճց, որը կոշտ ամրակցված է սռնուն, երկրորդ բռուճց, որը ազատ նստեցված է մուտքային սռնու վրա եւ ունի դիրքի սեւեռակ:

Մեխանիզմն ունի նաեւ առաջին հրիչ, որը հպվում է առաջին բռուճցին, առաջին հրիչի անշարժ ուղղորդիչներ եւ երկրորդ հրիչ, որը հպվում է երկրորդ բռուճցին, զուգահեռ է առաջին հրիչին եւ ունի իրանին ամրակցված անշարժ ուղղորդիչներ, ընդ որում առաջին եւ երկրորդ հրիչներն ունեն ատամնաձողային հատվածներ:

Հրիչների միջեւ տեղադրված է ատամնանիվ, որը կառչման մեջ է հրիչների ատամնաձողերի հետ, իսկ ատամնանիվի կենտրոնը հողակապորեն միակցված է ելքային կոթին:

Ընդարձակվում են մեխանիզմի ֆունկցիոնալ հնարավորությունները, 1 նկ.:

(51) 7 F24J 2/38 (11) 1482 (13) A2
(21) P20030120 (22) 17.10.2003
(42) 11.12.2003
(71) Ռաֆայել Խաչատրյան (AM), Էրնեստ Ղազարյան (AM)
(72) Ռաֆայել Խաչատրյան (AM), Էրնեստ Ղազարյան (AM)
(73) Ռաֆայել Խաչատրյան, Երեւան, Սմբատ Ջորավարի 48, բն. 9 (AM), Էրնեստ Ղազարյան, Երեւան, Տպագրիչների 5, բն. 19 (AM)
(54) Հելիոկայանքի դեպի Արեգակը կողմնորոշման ավտոմատ համակարգ
(57) Գյուտը վերաբերում է արեւային էներգիայի վերափոխման բնագավառին, մասնավորապես՝ արեւային կերպափոխիչների համախմբի դեպի Արեգակը կողմնորոշման համակարգերին:

Համակարգը կազմված է զգայուն տարրերի, կոմուտացնող եւ կատարող հանգույցներից՝ յուրաքանչյուրն իր սնման աղբյուրով: Զգայուն տարրերի հանգույցն իրականացված է մեկ

հարթության վրա շրջանագծով դասավորված ֆոտոռեզիստորների եւ շրջանագծի կենտրոնում նրա հարթությանը ուղղահայաց տեղակայված գնդմոնի ձեւով: Կոմուտացնող հանգույցն ունի գործարկող ու անջատող ռելեներ եւ լրացուցիչ ունի փոխարկիչ, որի անշարժ հպակները դասավորված են մեկ հարթության վրա շրջանագծով, ընդ որում դրանց քանակությունն ու միմյանց միջեւ անկյունը համապատասխանում են ֆոտոռեզիստորների քանակությանը եւ նրանց միջեւ անկյանը, որը հավասար է 15° աստիճանի: Փոխարկիչի անշարժ հպակները դիողների միջոցով միացված են ընդհանուր կետում, որը գործարկող ռելեի միջոցով, իսկ սահող հպակը անջատող ռելեի միջոցով միացված են կոմուտացնող հանգույցի սնման աղբյուրի միեւնույն սեղմակին: Կատարող հանգույցն ունի գործադիր սարք եւ դրա հետ հաջորդական շղթայում՝ գործարկող ռելեի մեկական նորմալ բաց ու անջատող ռելեի նորմալ փակ հպակ:

Պարզեցվում է համակարգի կառուցվածքը, 1 նկ.:

(51) 7 H01J 37/24 (11) 1483 (13) A2
G01T 7/00
(21) P20030088 (22) 08.07.2003
(42) 11.09.2003
(71) «Երեւանի ֆիզիկայի ինստիտուտ» պետական ոչ առեւտրային կազմակերպություն (AM)
(72) Սուրեն Հարությունյան (AM), Նիկոլայ Դոբրովոլսկի (AM), Մանվել Մայիլյան (AM), Իվան Վասիլյուկ (AM)
(73) «Երեւանի ֆիզիկայի ինստիտուտ» պետական ոչ առեւտրային կազմակերպություն, Երեւան, Ալիխանյան եղբայրների 2(AM)
(54) Տատանվող լարով պատկերամուտ (սկաներ) մասնիկների փնջերի եւ ճառագայթման պրոֆիլը որոշելու համար
(57) Գյուտը վերաբերում է արագացուցչային ու լազերային տեխնիկային եւ կարող է կիրառվել մասնիկների փնջերի դիրքը եւ ճառագայթման պրոֆիլը որոշելու համար:

Պատկերամուտն (սկաներն) ունի ձգված լար պարունակող ռեզոնանսային զգայուն տարր, որի ծայրերը միացված են էլեկտրական տատանումների գեներատորին, կոշտ հիմք, հիմքի վրա ամրակցված էլեկտրահաղորդիչ հպակներունեցող զույգ բարձակային սեղմակներ, որոնց միացված են ռեզոնանսային զգայուն տարրի ծայրերը, երկու միատեսակ մագնիսներ՝ փակ մագնիսապարփակիչներով: Մագնիսները

փոխովի են եւ ունեն դիրքի կարգավորման հնարավորություն բարձակային սեղմակների նկատմամբ եւ բեւեռների կողմնորոշման փոփոխման հնարավորություն:

Բարձրացվում են պատկերամուտի (սկաների) զգայունությունը, ճշգրտությունը եւ արագագործությունը, 8 նկ.:

**ՕԳՏԱԿԱՐ
ՄՈԴԵԼՆԵՐ**

**Օգտակար մոդելներին վերաբերող մատենագիտական
տվյալների նույնականացման միջազգային
կոդերը ըստ ՄՄԿ ST.9 ստանդարտի**

- 11 արտոնագրի համարը
13 փաստաթղթի տեսակի կոդը
Ս օգտակար մոդելի արտոնագիր
21 հայտի համարը
22 հայտի ներկայացման թվականը
23 լրացուցիչ նյութերի ստացման թվականով որոշված առաջնություն
31 առաջնային հայտի համարը
32 առաջնային հայտի ներկայացման թվականը
33 երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջնային հայտը
45 օգտակար մոդելի արտոնագրի մասին տեղեկությունների հրապարակման թվականը
51 միջազգային արտոնագրային դասակարգման (ՄԱԴ) ցուցիչ(ները)
54 օգտակար մոդելի անվանումը
56 տեղեկատվության աղբյուրներ
57 ռեֆերատը
62 ավելի վաղ ներկայացված հայտի համարը եւ ստացման թվականը, որից զատված է տվյալ հայտը
71 հայտատուն, երկրի կոդը
72 օգտակար մոդելի հեղինակը (ները), երկրի կոդը
73 արտոնագրատերը, հասցեն, երկրի կոդը
74 արտոնագրային հավատարմատար
85 միջազգային հայտի (PCT) ազգային փուլ անցման թվականը
86 միջազգային հայտի (PCT) համարը եւ ներկայացման թվականը
87 միջազգային հայտի (PCT) հրապարակման համարը եւ թվականը
-

Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին

(51) 7 B26B 21/00 (11) 72 (13) U
B26B 21/02
(21) U20040008 (22) 22.01.2004
(71) Մանուկ Մարգարյան (AM)
(72) Մանուկ Մարգարյան (AM), Արման Մարգարյան (AM)
(73) Մանուկ Մարգարյան, Երեւան, Վահր. Փափազյան փող. 2-րդ նրբ. 133 (AM)
(54) Անվտանգ ածելի
(57) Օգտակար մոդելը վերաբերում է սափրման միջոցների, մասնավորապես՝ անվտանգ ածելիների:

Անվտանգ ածելին ունի կոթ, բռնիչ եւ կտրող գլխիկ: Կոթի առաջնամասի կենտրոնական հատվածում տեղադրված է հաստատուն մագնիս, իսկ առաջնամասի անկյուններին տեղադրված են մագնիսի կողմից չձգվող մետաղից պատրաստված բռնիչներ, որոնց ծայրերը գտնվում են մագնիսե հանգույցի մեջ փորված անցքերում: Գլխիկի կտրող կողմի հակառակ մակերեսի ստորին հատվածի կենտրոնական մասում տեղադրված է մագնիսի կողմից ձգվող մետաղյա թիթեղ, 4 նկ.:

(51) 7 B65B 1/00 (11) 73 (13) U
(21) U20040032 (22) 05.03.2004
(71) «Ռոյալ-Արմենիա» ՀՀ ՍՊԸ (AM)
(72) Գագիկ Հակոբյան (AM)
(73) «Ռոյալ-Արմենիա» ՀՀ ՍՊԸ, Երեւան, Դավթաշենի 2-րդ փող. 26, բն. 38 (AM)
(54) Սրճի փաթեթվածք
(57) Օգտակար մոդելը վերաբերում է սննդամթերքի, մասնավորապես՝ սրճի փաթեթվածքներին:

Փաթեթվածքը պատրաստված է ալյումինե հիմքով պոլիմերային թաղանթից, կայուն հա-

տակով ուղղաձիգ կանգնած «Ռոյ Պակ» տիպի փաթեթի ձեւով եւ ունի մղակով օղակ: Փաթեթի մի պատի վրա ամրակցված է հակադարձ կափույր:

Ապահովվում է փաթեթից ածխաթթվային գազի արտամղումը, բացառվում է օդի ներթափանցումը, 4 նկ.:

(51) 7 F21V 3/04 (11) 74 (13) U
F21V 9/08
A61M 15/00
(21) U20040013 (22) 27.01.2004
(71) «Բնաբուժություն» ՍՊԸ (AM)
(72) Անդրանիկ Ոսկանյան (AM), Պավել Գորբենկո (RU), Վարուժան Ոսկանյան (RU)
(73) «Բնաբուժություն» ՍՊԸ, Երեւան, Աբովյան 34ա, բն. 57 (AM)
(54) Լուսատու
(57) Օգտակար մոդելը վերաբերում է լուսավորման սարքերին, որոնք նախատեսված են լույսի ճառագայթման եւ բաշխման համար եւ կարող է օգտագործվել ծովային եւ աղային քարանձավների կլիմայի վերարտադրման համար ինչպես բուժական, այնպես էլ արտադրական ու կենցաղային տարածքներում:

Լուսատուն ունի քարաղի լուսանցիկ մենաքարից պատրաստված սնամեջ լուսամփոփ, որի խոռոչում տեղակայված է լույսի ճառագայթման էլեկտրական աղբյուր: Լուսամփոփի պատերն ունեն միջանցիկ անցքեր: Ընդ որում լուսամփոփը պատրաստված է Առինջ Ավանի հանքավայրի քարաղի մենաքարից: Բարձրացվում է աերոզոլի արտաթողումը, 1 նկ.:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ
ՆՄՈՒՇՆԵՐ

**Արդյունաբերական նմուշներին վերաբերող
մատենագիտական տվյալների նույնականացման
միջազգային կոդերը ըստ ՄՍՀԿ ST.80 ստանդարտի**

11	արտոնագրի համարը
13	փաստաթղթի տեսակի կոդը
	<i>S</i> արդյունաբերական նմուշի արտոնագիր
21	հայտի համարը
22	հայտի ստացման թվականը
23	ցուցահանդեսային առաջնության թվականը
24	թվականը, որից սկսվում է ՀՀ արտոնագրով վերապահված իրավունքների գործողությունը
31	առաջնային հայտի համարը
32	առաջնային հայտի ներկայացման թվականը
33	երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջնային հայտը
51	արդյունաբերական նմուշների միջազգային դասակարգման (ԱՆՄԴ) ցուցիչը(ները)
54	արդյունաբերական նմուշի անվանումը
55	արդյունաբերական նմուշի պատկերը (գծանկարը, լուսանկարը)
57	էական հատկանիշների ամբողջությունը
71	հայտատուն(ները), երկրի կոդը
72	հեղինակը(ները), երկրի կոդը
73	արտոնագրատերը(երը), հասցեն, երկրի կոդը
74	արտոնագրային հավատարմատար

Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին

- (51) 8 07-01 (11) 77 (13) S
 09-01
 (21) D20040001 (22) 15. 01. 04
 (71) «Շահումյան – Վին» ՍՊԸ (AM)
 (72) Թովմաս Սահակյան (AM)
 (73) «Շահումյան – Վին» ՍՊԸ, Արարատի մարզ,
 գ. Շահումյան (AM)
 (54) Ունկով սափոր
 (55)



(57) Հայկական ավանդական կավե սափորների նմանությամբ լուծված, ուղղաձիգ կողմնորոշմամբ հարթ հատակով ունկով սափոր, բաղկացած հետևյալ հորինվածքային տարրերից՝ իրան, ուսեր, վզիկ (թկանցք), պսակիկ, հատակ եւ ունկ. դեպի հատակը կոնաձեւ (շրջված հատած կոնի տեսքով) նեղացող իրան.

փոքր բարձրությամբ եւ թեքությամբ (տափակ) զմբեթի ձեւ ունեցող, սահուն անցումով իրանին եւ վզիկին միացված ուսեր, միացման մասում սահմանազատված իրանից այն գոտեւորող երկու սահուն, ոչ խորը ակոսներով սահմանափակված ուռուցիկ օղագոտով.

կոնաձեւ (հատած կոնի տեսքով) կարճ վզիկ, որն ավարտվում է մի կողմից քթիկ ունեցող ցցուն օղակաձեւ ելուստի տեսքով պսակիկով.

շրջանային կիսատորի տեսքով ունկ, սահուն լծորդված ուսերի մակերեւույթին իրանի եւ վզիկի հետ դրա միացման մասերում.

իրանի մակերեւույթի թեթեւ գունավորված (բաց դարչնագույն) բնական մակատեսք (ֆակտուրա), իսկ իրանից վերեւ ընկած հատվածի (ուսեր, վզիկ, պսակիկ, ունկ) եւ սափորի ներքին ծավալի ջնարակումը մուգ շագանակագույնով.

ուսերի արտաքին ջնարակված մակերեւույթների վերին շերտը տեղ-տեղ հեռացնելու միջոցով ստացված վերացական պատկերներ, իսկ ուսերի առաջամասի կենտրոնում՝ ցցուն պայտաձեւ (հաջողության խորհրդանշի) պատկեր.

